

2016թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 524 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2016թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 524 հարկ վճարողների 2016 և 2015 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2016թ. չորրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 1193.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճելով 15.7%:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 2.6 %-ով և կազմել 238.0 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները աճել են 6.5%-ով և կազմել 143.4 մլրդ դրամ:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2016թ.-ի չորրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 39.4 մլրդ. դրամ, որից ԱԱՀ-ն կազմել է 27.5 մլրդ դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2016թ.-ի չորրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 105.3 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2016թ.-ի չորրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 47.8%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 179 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 71 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 6.3 մլրդ. դրամի չափով:
7. 01.01.2017թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 138.2 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 80.3 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 24.0 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 12.6 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 2.2 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 1.0%-ով, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը աճել է 3.7% -ով և կազմել 240 հազար դրամ: